ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Երևան 0010, Նալբանդյան 13, հեռ.՝ (010) 52 45 74, ֆաքս՝ (010) 52 15 94
info@sif.am, www.ssss.am

N ԼՀԼՀ/1-8/9088-15 «19» 10 2015թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ձեր N 263-ի 6
12.10.2015թ.

Ի պատասխան Ձեր հարցման հայտնում եմ հետևյալը.

Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայությունը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով մատուցում է ծառայություններ սոցիալական ապահովության բնագավառում: Ըստ այդմ, աշխատանքի վարձատրության քաղաքականության մշակման և դրա իրականացման գործառույթները չեն մտնում Ծառայության իրավասությունների շրջանակի մեջ. Ծառայությունը չի համարվում հայցվող տեղեկատվության շրջանակին վերաբերող հարցերին պարզաբանում տվող լիազոր մարմին:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով երկուստեք ձեռք բերված գործընկերային հարաբերությունները, տեղեկացնում եմ, որ պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության սկզբունքները և վարձատրության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորված են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք):

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հիմնական աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափ)՝ բազային աշխատավարձի և օրենքով սահմանված համապատասխան գործակցի արտադրյալն է: Նույն մասի 5-րդ կետի համաձայն՝ գործակիցը պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի չափը որոշելու համար բազային աշխատավարձն այդ թվով բազմապատկելու համար սահմանված մեծությունն է:

«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ 2015 թվականին պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը կազմում է 66,140.0 դրամ:

Օրենքի N 2 հավելվածի համաձայն՝ ՀՀ նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը կազմում է 8.50 միավոր:

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ